ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Դատական դեպարտամենտի կարիքների համար A4 ֆորմատի թղթի ձեռքբերման
նպատակով կազմակերպված «ԴԴ-ՀՄԱՊՁԲ-22/02» ծածկագրով
գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «19» հուլիսի 2022թ.
Ժամը՝ 15:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նիստը նախագահող՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

հանձնաժողովի անդամներ՝

Նելա Մուրադյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետ (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ – շինարարի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**)

հանձնաժողովի քարտուղար՝

Գայանե Դավիթյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ ընթացակարգի համակարգող՝ **ԳՊ/Մհմ**)

Բացակայում էին՝

Վահագն Հարությունյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ **ԳՊ/ԳԱՊ**)

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**)

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 26-րդ կետի 1-ին ենթակետի՝ նիստը նախագահում է Արթուր Ասատրյանը:

1. Տեղեկություն՝ «ԴԴ-ՀՄԱՊՁԲ-22/02» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային գնումների իրականացումն ապահովող համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով՝ 2022թ.-ի հուլիսի 19-ին, ժամը 15:00-ին:

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքի գնման գնի վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նիստը նախագահողը հրապարակեց սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գնման հայտով սահմանված գնման գինը.

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Գնման հայտով սահմանված գնման գինը (ՀՀ դրամ)
1	Թուղթ, A4 ֆորմատի	24 000 000

3. Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը (անունը)	Մասնակցի գործունեության հասցեն
«Սմարթլայն» ՍՊԸ	ք. Երևան, Վարդանանց 110
«ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Քրիստափորի 2/2
Միլլեննիումս Դիստրիբյուշն ՍՊԸ	-
«ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	ք. Երևան, Սմբատ Զորավարի 11/1

Ներկայացված հայտերը Համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

Հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. Մասնակիցների կողմից ներկայացված հայտերի ուսումնասիրության նպատակով հանձնաժողովը որոշեց նիստը հետաձգել և հաջորդ նիստը հրավիրել 2022թ. հուլիսի 21-ին՝ ժամը 10:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նիստը նախագահող՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ _____ Նելա Մուրադյան

_____ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝ _____ Գայանե Դադիվանյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Դատական դեպարտամենտի կարիքների համար A4 ֆորմատի թղթի ձեռքբերման
նպատակով կազմակերպված «ԴԴ-ՀՄԱՊՁԲ-22/02» ծածկագրով
գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «21» հուլիսի 2022թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նիստը նախագահող՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

հանձնաժողովի անդամներ՝

Նելա Մուրադյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետ (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**)

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ – շինարարի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**)

հանձնաժողովի քարտուղար՝

Գայանե Դադիվանյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ ընթացակարգի համակարգող՝ **ԳՊ/ՄԻՄ**)

Բացակայում էր՝

Վահագն Հարությունյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ **ԳՊ/ԳԱՊ**)

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 26-րդ կետի 1-ին ենթակետի՝ նիստը նախագահում է Արթուր Ասատրյանը:

1. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում «ԴԴ-ՀՄԱՊՁԲ-22/02» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

1.1. «Սմարթլայն» ՍՊԸ-ի, «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ի, «ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

1.2. www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային գնումների իրականացումն ապահովող համակարգում՝ «Պիտանելիության չափորոշիչ» բաժնում, Միլլեննիումս Դիստրիբյուշն ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում են հրավերով պահանջվող՝ հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ընթացակարգին մասնակցելու դիմում հայտարարության, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի հավելվածները, այսինքն՝ հավելվածների ֆայլերը ակտիվ չեն դիտելու համար (համապատասխան դաշտերում տեսանելի են միայն ֆայլերի պայմանական անունները և հնարավոր չէ դիտել ֆայլերը), իսկ «Ֆինանսական» բաժնում բացակայում է (կցված չէ) մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը՝ հանձնաժողովը որոշեց մերժել Միլլեննիումս Դիստրիբյուշն ՍՊԸ-ի հայտը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի (հայտում առկա փաստաթղթերի)՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

2.1. **«Սմարթլայն» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտում առկա.

- հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ընթացակարգին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ դիմում հայտարարության չորրորդ նախադասության 2)-րդ կետում մասնակցի անվանման («Սմարթլայն» ՍՊԸ) փոխարեն թվով երկու դաշտերում նշված է «Սմարթլայն» ՍՊԸ-ի գործունեության հասցեն, ինչպես նաև մասնակցի հայտով ներկայացված է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր (Հավելված 1.3), սակայն հիշյալ դիմում հայտարարության նախավերջին նախադասությունում դրա մասին նշում կատարված չէ.
- իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը (Հավելված 1.3) (այսուհետ՝ հայտարարագիր) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝
  - հայտարարագրի «1.3. Հայտարարագրի ներկայացումը» ենթաբաժնի «1.3.1. Հայտարարագրի ստորագրման օրը, ամիսը, տարին» դաշտում հայտարարագրի ստորագրման ամսաթիվը նշված է «11.07.22թ», այն դեպքում, երբ հայտարարագիրը ներկայացնող անձի կողմից հայտարարագիրը ստորագրված է 19.07.2022թ.-ին.
  - հայտարարագրի «4.2. Անձը հաստատող փաստաթուղթը» ենթաբաժնի «4.2.2. Փաստաթղթի համարը» դաշտում լրացված անձնագրի թվանշանների քանակը գերազանցում է ՀՀ կառավարության 1998թ. դեկտեմբերի 25-ի N 821 որոշմամբ անձնագրերի համարակալման համար նախատեսված թվանշանների քանակին.
- առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հավելված 1.1), գնային առաջարկը (Հավելված 2) կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

2.2. **«ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտում առկա.

- հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ընթացակարգին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ դիմում հայտարարության չորրորդ նախադասության 2)-րդ կետում բացակայում են «անբարեխիղճ մրցակցություն,» բառերը.

- առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հավելված 1.1), իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը (Հավելված 1.3), գնային առաջարկը (Հավելված 2) կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

2.3. **«ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտում առկա.

- հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ընթացակարգին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված 1), առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հավելված 1.1), գնային առաջարկը (Հավելված 2) կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան.
- իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը (Հավելված 1.3) (այսուհետ՝ Հայտարարագիր) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝

• հրավերով ներկայացված՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի լրացման կարգի (այսուհետ՝ Կարգ) 1-ին կետի 2)-րդ ենթակետով սահմանված է, որ «Հայտարարագիրը ներկայացնող անձը» ենթաբաժնում լրացվում է այն ֆիզիկական անձի տվյալները ով ստորագրում է սույն ընթացակարգի հայտում ներառվող փաստաթղթերը: Մասնակցի հայտով ներկայացված է լիազորագիր, որի հիմքով հայտում ներառված փաստաթղթերը ստորագրված են լիազորված անձի կողմից, սակայն Հայտարարագրի «1.2. Հայտարարագիրը ներկայացնող անձը» ենթաբաժնի համապատասխան դաշտերում լրացված են ոչ թե լիազորված անձի, այլ ընկերության տնօրենի տվյալները, ինչը չի համապատասխանում Կարգի նշված ենթակետի պահանջներին.

• Հայտարարագրի «4.3., 5.3., 6.3. Անձի հաշվառման հասցեն», «4.4. Անձի բնակության հասցեն» ենթաբաժինների «4.3.3., 4.4.3, 5.3.3., 6.3.3 Վարչատարածքային միավորը» դաշտերում նշված չեն համապատասխան վարչատարածքային միավորները.

• Հայտարարագրի «4.5., 5.5., 6.5. Իրական շահառու հանդիսանալու հիմքերը (բացառությամբ՝ ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների)» ենթաբաժինների «4.5.1., 5.5.1., 6.5.1. Մասնակցության չափը (%)» և «4.5.2., 5.5.2., 6.5.2. Մասնակցության տեսակը» դաշտերում կատարված են համապատասխան նշումներ, սակայն «ա.» կետերում որևէ նշում կատարված չէ: Միաժամանակ Կարգի 4-րդ կետի 7-րդ ենթակետի պահանջների համաձայն՝ Հայտարարագրի «4.7., 5.7., 6.7. Իրական շահառուի կարգավիճակի վերաբերյալ տեղեկությունները» ենթաբաժինների **«4.7.3., 5.7.3., 6.7.3. Ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպության իրական շահառուն հանդիսանում է պաշտոնատար անձ կամ նրա ընտանիքի անդամ»** դաշտերի տեղեկատվությունը վերաբերում է ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձանց, ուստի հաշվի առնելով, որ մասնակցի կողմից լրացված են հայտարարագրի «4.5., 5.5., 6.5. Իրական շահառու հանդիսանալու հիմքերը **(բացառությամբ՝ ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների)**» ենթաբաժինների համապատասխան դաշտերը, տվյալ դեպքում Հայտարարագրի **4.7.3.-րդ, 5.7.3.-րդ, 6.7.3.-րդ** դաշտերում կատարված նշումներն ավելորդ են:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Մասնակիցների առաջարկած գներն են.

ՀՀ դրամ

Հ/Հ	Չափաբաժնի անվանումը	«Սմարթլայն» ՍՊԸ			«ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ		
		Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	**Թուղթ, A4 ֆորմատի**	19 000 000	3 800 000	**22 800 000**	9 160 000	1 832 000	**10 992 000**

ՀՀ դրամ

Հ/Հ	Չափաբաժնի անվանումը	«ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ		
		Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	**Թուղթ, A4 ֆորմատի**	9 800 000	1 960 000	**11 760 000**

4. Հանձնաժողովը որոշեց.

- նիստը կասեցնել և հաջորդ նիստը հրավիրել 2022թ. հուլիսի 25-ին, ժամը 11:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի քարտուղարին.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի, ինչպես նաև «ԴԴ-ՀՄԱԱՊՁԲ-22/02» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.9 կետի պահանջներով՝ հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել «Սմարթլայն» ՍՊԸ-ին, «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ին, «ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին, առաջարկելով մինչև սույն թվականի **հուլիսի 22-ը ներառյալ** շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նիստը նախագահող՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝

_____ Նելա Մուրադյան

_____ Տիգրան Զեյնալյան

_____ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝

_____ Գայանե Դադիվանյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

Դատական դեպարտամենտի կարիքների համար A4 ֆորմատի թղթի ձեռքբերման
նպատակով կազմակերպված «ԴԴ-ՀՄԱԱՊՁԲ-22/02» ծածկագրով
գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «25» հուլիսի 2022թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նիստը նախագահող՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

հանձնաժողովի անդամներ՝

Նելա Մուրադյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետ (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**)

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ – շինարարի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**)

հանձնաժողովի քարտուղար՝

Գայանե Դադիվանյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ ընթացակարգի համակարգող՝ **ԳՊ/ՄԻՄ**)

Բացակայում էր՝

Վահագն Հարությունյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ **ԳՊ/ԳԱՊ**)

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 26-րդ կետի 1-ին ենթակետի՝ նիստը նախագահում է Արթուր Ասատրյանը:

1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ՀՄԱԱՊՁԲ-22/02» ծածկագրով ընթացակարգի շրջանակում «Սմարթլայն» ՍՊԸ-ի, «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ի և «ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման և հայտերի գնահատման արդյունքների վերաբերյալ.

«Սմարթլայն» ՍՊԸ-ն, «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ն և «ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկել են հայտերում արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

«Սմարթլայն» ՍՊԸ-ի, «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ի և «ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը, այդ թվում՝ առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ.

Ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով՝ հանձնաժողովը որոշեց.

- **ընտրված մասնակից ճանաչել /հայտարարել/ «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ին:**

- ընտրված չճանաչված մասնակիցներ հայտարարել «ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին, «Սմարթլայն» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

- հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է),
- գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նիստը նախագահող՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝

_____ Նելա Մուրադյան

_____ Տիգրան Զեյնալյան

_____ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝

_____ Գայանե Դավիդյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
պայմանագիր կնքելու որոշման մասին

Ընթացակարգի ծածկագիրը **«ԴԴ-ՀՄԱԱՊՁԲ-22/02»**

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար A4 ֆորմատի թղթի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՀՄԱԱՊՁԲ-22/02» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին տեղեկատվությունը՝

Գնահատող հանձնաժողովի 2022 թվականի հուլիսի 25-ի թիվ 4 որոշմամբ հաստատվել են ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները: Համաձյան որի՝

Չափաբաժին 1:

Գնման առարկա է հանդիսանում՝ **Թուղթ, A4 ֆորմատի**:

Հ/Հ	**Մասնակցի անվանումը**	**Հրավերի պահանջներին համապատասխանող հայտեր** /համապատասխանելու դեպքում նշել “X”/	**Հրավերի պահանջներին չհամապատասխանող հայտեր** /չհամապատասխանելու դեպքում նշել “X”/	**Անհամապատասխանության համառոտ նկարագրույթուն**
1	«Սմարթլայն» ՍՊԸ	X		
2	«ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ	X		
3	Միլլեննիումս Դիստրիբյուշն ՍՊԸ		X	www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային գնումների իրականացումն ապահովող համակարգում՝ «Պիտանելիության չափորոշիչ» բաժնում, Միլլեննիումս Դիստրիբյուշն ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայել են հրավերով պահանջվող՝ հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ընթացակարգին մասնակցելու դիմում հայտարարության, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի հավելվածները, այսինքն՝ հավելվածների ֆայլերը ակտիվ չեն եղել դիտելու համար (համապատասխան դաշտերում տեսանելի են եղել միայն ֆայլերի պայմանական

				անունները և հնարավոր չի եղել դիտել ֆայլերը), իսկ «Ֆինանսական» բաժնում բացակայել է (կցված չի եղել) մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը՝ հանձնաժողովը մերժել է Միլլեննիումս Դիստրիբյուշն ՍՊԸ-ի հայտը:
4	«ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	X		

Մասնակիցների զբաղեցրած տեղերը	**Մասնակցի անվանումը**	**Ընտրված մասնակից** /ընտրված մասնակցի համար նշել “X”/	**Մասնակցի առաջարկած գին /առանց ԱՀՀ, ՀՀ դրամ/**
1	«ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ	X	9 160 000
2	«ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ		9 800 000
3	«Սմարթլայն» ՍՊԸ		19 000 000

Ընտրված մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշ՝ հրավերին համապատասխանող հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ՀՄԱԱՊՁԲ-22/02» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Գայանե Դադիվանյանին:

Այլ անհրաժեշտ տեղեկություններ՝

Հեռախոս՝ **010-511-783**:

Էլեկտրանային փոստ՝ **ddgnumner@mail.ru**:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**